

Պ Ա Ղ Ե Ս Տ Ի Ն

(Տես Լրես 130.)

Թ. — Երուսաղեմայ շրջակայքը:

Իսկ եթէ Աղբեաց և կամ Ս. Ստեփանոսի դռնէն դուրս ելլեմք, Յորդանան գետն անցնելով, իբրեւ գլխաւոր յիշատակաց տեղ կը հանդիպիմք նախ Գէթսեմանի պարտիզին, Չիթենեաց և Գայթակղութեան լերանց, Յովսափատու ձորոյն և Կեղբոն հեղեղատին:

Գէթսեմանի պարտէզը, հարիւր քառասուն ոտք լայնութիւն և երկու հարիւր ոտք երկայնութիւն ունի, և երեք ոտք բարձրութեամբ պարսպով շրջապատած է: Այս պարտէզը միգաստանի տեսակ մ'է, և երբեմն իր մէջն եղած բազմութիւն ձիթենի ծառոց պատճառաւ, կոչուած է նաև Չիթենեաց պարտէզ, որոյ ստուերին տակ կերթար ժողովուրդը շրջագայելու կամ հանգչելու: Բայց այն ծառերէն հիմա ութ և կամ ինն հատ մնացած է, որոցմէ երկուքը քսան ոտք շրջապատ ունի. կարգէ դուրս մեծ են, և սաստիկ հնութեան ցոյց կու տան. և կը կարծուի թէ այս հնութիւնն մինչև Քրիստոսի ժամանակն 'ի վեր ելլայ. որ և շատ հաւանական է. վասն զի գիտեմք որ ձիթենին նախ դրժուարաւ կը մեծնայ, և երկրորդ՝ նորանոր բողբոջներով գրեթէ անվախճան ինք զինքն պահելու յատկութիւն ունի:

Այս պարտէզը մտնող պանդուխտ քրիստոնէին միտքը նախ այն կու գայ, որ Յիսուս այս ծառոց ստուերին տակ նստած խօսեցաւ իր աշակերտաց հետ, աղօթեց հոն իրենց համար, որպէս զի փորձութենէ ազատ պահէ: Հոս է ուր տրոմեցաւ Յիսուս մինչև ցմահ. վասն զի մարդկային խեղճութիւնը, մեղաց ծանրութիւնը, Հրէից կուրսութիւնը և ապաշորհութիւնը, ամեն ազգաց մէջ մեղաւորաց անթիւ բազմութիւնը, այս ամեն բաներն որ կը ներկայանային

միանգամայն փրկիչ Աստուծոյ մը առջին, խոր տպաւորութիւն կ'ընէին վրան և զինքը յետին անձկութեան և տրտմութեան մէջ կը ձգէին: Հոս այն տեղն է, ուր վայրկեան մը թողլով իր աշակերտները՝ հեռացաւ անոնցմէ, և ծուռը զնելով գետնոյ վրայ, աղաչեց իր երկնաւոր Հօրը՝ որ այս բաժակը անցընէ իրմէ: Հոս սուր առաւ Պետրոս պաշտպանելու իր երկնաւոր վարդապետը, և հոս կատարեցաւ վերջապէս ահաւոր եղեռան առաջին տեսարանը:

Պարտիզին հիւսիսակողմը գետնափոր մատուռ մի կայ, որ ունի իր մէջ Տիրամօր գերեզմանը: Մատրան մէջ քառասուն և ինն աստիճան սանդղով կ'իջեցուի: Այս սանդղին մէջ տեղն հասնողը կը տեսնայ մի կողմը Յովակիմայ և Աննայի և միւս կողմը Ս. Յովսեփայ գերեզմանները: Այս կէտէն մինչև Չիթենեաց լերան գագաթը լի է միջոց սրբազան յիշատակներով: Նախ կը տեսնեմք այն ժայռը՝ որոյ վրայէն արտասուեց Յիսուս երուսաղեմայ վրայ. ետքը քանի մ'այրեր որոյ մէջ կը դնէ աւանդութիւնը մարգարէից ոմանց գերեզմանները. ապա կամարաձև աղբիւր մը, ուր շարադրեցին Առաքեալը հաւատաւոր. աւելի առաջ մատրան մը աւերակները, ճիշտ այն տեղոյն վրայ շինած, ուր սորվեցուց Յիսուս, ըստ աւանդութեան, տէրունական աղօթքը, և վերջապէս կը հասնիմք Չիթենեաց լերան զուարճալի և յիշատակաց տրժանի գագաթը:

Այո, Չիթենեաց լերան գագաթնեմք. ահաւասիկ սքանչելի տեսարան մ'է որ կը բացուի դիմացնիս: Արևելակողմը կը տարածուի Երկբովի դաշտավայրը, ուսկից, անդին կը տեսնուի համբաւաւորն Յորդանան որ կ'երթայ կ'անհետանայ 'ի Մեռեալ ծով: Արևմտակողմը՝ Երուսաղէմ իր եկեղեցիներովն, աշտարակներովն և գմբէթներովն: Հիւսիսակողմը տեսութեան հորիզոնը կը տարածի անդ քան զլեռն Գարիզիմ. իսկ հարաւակողմը մինչև ցիբեթ, լեհէմ և ցՀբբոն, որոց գեղեցիկ այգի-

ներն կը պարսպեն դիտողին տեսութիւնը:

Զիթենեաց լեռը այլ և այլ ժամանակ, այլ և այլ նկատմամբ քրիստոնէից մտադրութիւնը միշտ առ ինքն ձգած է: Եկեղեցւոյ առաջին դարուց մէջ հրաշալի կրակներ կը նշմարուէր լեռան գագաթը, և իններորդ ու տասներորդ դարուց պանդուխտներն կը կարծէին տեսնալ Քրիստոսի փառաւոր համբարձման տեսարանը: Ոմանք 'ի պանդխտաց Զիթենեաց լեռան վրայ հասնելով, ձեռքերնին խաչաձև, արտասուալից աչք կը տարածուէին գետնոյ վրայ և կը խնդրէին յԱստուծոյ ազատել զիրենք 'ի կապանաց մարմնոյ, այն տեղոյն վրայ ուր Քրիստոս փառաւորապէս երկինք համբարձաւ: Խաչակիրք, Երուսաղեմայ վրայ ընելիք վերջին յարձակմանէն առաջ, կանկ առին Զիթենեաց լեռան վրայ, և նուիրական լեռան գագաթէն քաղքին միայն տեսքը կրցաւ բորբոքել Կոտրֆրուայի ընկերաց դիւցազնական եռանդը: Զիթենեաց լեռը մնաց Երուսաղեմի, մանաւանդ թէ ըսեմ բոլոր Հրէաստանի՝ իբրև յետին պարծանք մը, որ իբրև ճաճանչաւոր թագ մը կը պսակէ տակաւին զՍիոն: Քննադատութիւնը և սկեպտականութիւնը որ Հրէաստանէն անցնելով խառնակած են նուիրական տեղուանքն, զոմանս տեղափոխելով զայլս մերժելով, ըստ իմ խորհելոյ, չեն կրնար տարածել իրենց տարակուսանաց խաւարը Զիթենեաց լեռան վրայ:

Լեռան գագաթը կիսաւեր մզկիթ մի կայ, որ ժամանակաւ եկեղեցի մ'էր 'ի յիշատակ Համբարձման Քրիստոսի, կառուցեալ 'ի Հեղինեայ զշխոյէ: Հիմա այս եկեղեցւոյն միայն հիմը և սեանց ու մարմարիոն քարանց կտորուանքներն մնացած են. և ըստ աւանդութեան մօտ մատրան մը մէջ կեցած է Յիսուսի ոտից հետքը, զոր դրոշմեց հոն իր երկինք ելլելու ժամանակ. որոյ վերայ ամեն տարի Համբարձման օրը լատինածէս կրօնաւորք պատարագ կը մատուցանեն:

Զիթենեաց լեռան մօտ գէպ հարաւակողմը կայ ուրիշ լեռ մ'ալ, Լեւառն Գայքակողոք'աւն ըսուած, ուր Սողոմոն մեհեաններ կանգնել տուաւ նուիրելով զանոնք Մովսէս և Ամոն չատուածոց: Հոս կնքեց Յուդա իր ցաւալի օրերն:

Կը թողունք այս տեղուանքն և այս գետիններն, զորս թէպէտ Քրիստոս թրջեց իր արտասուօքն և քրտամբքն, բայց և փառաւորեց իր Համբարձմամբն, և կը մտնամք տխրատեսիլ ձոր մը, ձոր մը որ լի է անհամար դամբաններով, ձոր մը որ համբաւաւոր է երեք կրօնից աւանդութեանց մէջ ալ հաւասարապէս. ուր Հրեայք, Քրիստոնեայք և Մահմետականք կը միաբանին վերջին դատաստանին ահաւոր տեսարանը դրնելու. ձոր մը՝ որ տեսած է աւետարանական դիպաց մեծամեծ տեսարանները. Յիսուսի լացը, հեծութիւնը և մահը. ձոր մը՝ ուսկից ամենայն մարդարէք անցան փոփոխակի ցաւոց և արհաւիրաց ձայն մ'արձակելով, որ կարծես թէ կը թնդայ տակաւին իրենց ձայնից արձագանգէն. ձոր մը որ պիտի լսէ անգամ մ'ալ դատապարտելոց մեծ աղաղակը, ինքն իսկ ներկայ և վկայ հանդիսանալով ահաւոր դատաստանին. և կը կոչուի ձոր Յովսափատու, որ իր անունը համանուն թագաւորի մը անունէն առած է, հոն թաղուած ըլլալուն համար. և Ս. Գրոց մէջ կոչուած է ևս Ձոր Լարայ և Ձոր Մեքիսեղեկի, վասն զի հոս ընդ առաջ ելան Աբրահամու Սաղիմայ թագաւորները և Սողոմոնացւոց թագաւորը, հինգ թագաւորաց դէմ տարած յաղթանակը շնորհաւորելու համար:

« Երբ ձորի մը վրայ խօսք ըլլայ, կըսէ Շաղոպրիան, մշակեալ կամ անմշակ կը հասկընամք, մշակեալ՝ երբոր ծածկուած ըլլայ բնակութեամբ, հունձքերով, այգեստանեօք և գեղերով. անմշակ՝ երբոր միայն խոտ և կամ անտառ բուսցընէ: Եթէ գետով մը առողուած է, այս գետն ունի իր մանուածներն. ձորը ձեացնող լեռնակներն ալ

Նմանապէս ունին իրենց մանուածապատ շրջաններն, որոնց տեղքը ախորժանօք առ ինքն կը ձգէ մարդկային հայեցումաժքը: — Բայց հոս այս ամեն բաներէն և ոչ մին. երևակայեցէք լերանց երկու երկայն շղթաներ, որ կը ձգին զուգահեռական հիւսիսէն ցհարաւ, առանց շրջանի և առանց պտուտից: Արևելեան շղթան որ կ'ըսուի լեռուն Արաբիոյ, աւելի բարձր է. ութ կամ տասն միոն հեռուէն տեսնողն, կ'ըսէ թէ կապտադոյն ուղղաձիգ մեծ պարիսպ մ'է: Գաղաթ մը ամենեւին չորոչուի, և ոչ պղտի ծայր մը. միայն թէ աստ անդ թեթև կորութիւններ կը նշմարին, որպէս թէ այս հորիզոնական գիծը քաշող նկարչին ձեռքը տեղ տեղ միայն վրիպած ըլլայ: — Իսկ արևմտեան լերանց շղթան, Հրէաստանի լերանց կը վերաբերի: Արևելեաններէն նուազ բարձր, և քան զանոնք անհաւասար, իրենց բնութեամբն ալ կը տարբերին անոնցմէ: Աւազոյ և կապճի մեծամեծ կտորներ կը ներկայացնեն, որ կը նմանին գինուց խուրձի, ծաւալեալ դրօշուց և կամ վրանաց պարզելոց: Արաբիոյ կողմանէ եղած լերինք ընդհակառակն վերուստ 'ի վայր կշիռ սև ժայռեր են, որ կը տարածեն իրենց ստուերը Մեռեալ ծովուն ջուրց' վերայ...: Ամենայն ինչ կը վկայէ թէ տեղին երեսէ ձգուած ժողովրդեան մը հայրենիքն է, ամենայն ինչ կարծես կ'ուզէ յիշեցնել Սամոն և Մովար չաստուածոց գարշութիւնքը:

«Այս երկու լերանց շղթայից մէջ պարփակուած ձորը այնպիսի երկիր մը կ'ընծայէ որ կը նմանի երկար ժամանակէ 'ի վեր տեղի տուած ծովու յատակի. աղի կոյտեր, չորացեալ տիղմեր, շարժուն և իբրև թէ ալիքներէ ակօսաբեկ եղեալ աւաղներ: Այս անկենդան երկրին վրայ աստ անդ միայն քանի մը թուփեր կ'երևան, բայց անոնք ալ անշուք, և տերեւին բոլոր աղով ծածկուած: Փոխանակ զիւղից, կ'երևան միայն աշտարակաց ոմանց աւերակներն, Զորոյն մէջէն գունատ գետ մը

կ'անցնի, և դժուարաւ ձգելով զինքը դէպ 'ի դարշահոտ լիճը, կը կորսուի անոր մէջ:

«Այսպիսի են երկնից օրհնութեամբը և անիծիւքը համբաւաւոր եղած այս տեղուանքը: Ըսած գետերնիս Յորդանանն է, իսկ լիճը՝ Մեռեալ ծովն: Ասիկա գեղեցիկ երևար պիտի, բայց իր մէջը ծածկած եղեռնագործ քաղաքներն կարծես թէ թունաւորած են իր ջուրերը: Իր մենաւոր անդունդներն, չեն կրնար կենդանի էակ մը սնուցանել. նաև՝ մը երբեք իր ջուրերն կոխած չէ. իրեն ափունքը առանց թռչնոց, առանց ծառոց և առանց կանաչութեան, իր ջուրերն այնպիսի ծանրութիւն և թանձրութիւն ունին՝ որ ամենաուժգին քամիներն անգամ չեն կրնար ալէ կոծել »:

Տխուր է յիրաւի Յովսափատու ձորը ըստ Շաղոպրիանի, և կ'երևայ որ այս տեղը հին ժամանակէ 'ի վեր Հրէից գերեզմանատուն եղած ըլլայ: Ճանապարհորդ պանդուխտը ուրիշ բան չի տեսներ հոս, բայց եթէ մահուան յաղթանակներ: Հրեայք թէ և ցրուեալք ընդ ամենայն կողմն աշխարհի, բայց աչքերնին միշտ դէպ 'ի այս ձորն է, և հազարաւորք 'ի նոցանէ, նաև 'ի ծաղիկ հասակի, կը թողուն իրենց քաղցր հայրենիքը, և հոս կու գան յետին քունը ննջելու իրենց հարցը հետ: Գերեզմանական քարերն անթիւ են, և ծայրէ 'ի ծայր բռնած են ձորը, և կը տարածին մինչև Բեթանիոյ սահմանը և լերանց ստորոտը. և Յովսափատու ձորէն մինչև ուր որ մարդկային աչքը զօրէ, բոլոր մահուան ասպարէզ մ'եղած է:

Ուրեք ուրեք կը տեսնուին ևս չիրիմք և մահարձանք. ինչպէս Աբիսողոմայ, Զաքարիայ և Յովսափատոյ շիրիմներն. որոնք յետին ռամկին հետ խառնուած՝ կը ննջեն այն ցաւոց դաշտին մէջ: Աբիսողոմայ շիրիմը բրդաձև տապան մ'է,

1 Շաղոպրիան հոս ընդհանուր կարծեաց կը հեռուի, սակայն Ստրաբոն, Պլինիոս և Դեոդոր Սիկիւլացի կը յիշատակեն լաստեր, որոնցմով կ'երթային տեղացիք կուպր ժողովու համար:

24 դորացի սիւներով շրջապատած: Իսկ Յովսափատայ գերեզմանը չորեքկուսի քարաժայռի մէջ փորուած է:

Զաքարիայ և Աբիսողոմայ գերեզմանաց մէջ հետաքրքրական յիշատակարան մի կայ, զոր տեղացիք կոչեն Գերեզման Առաքելոց կամ Գարայր Ս. Յակոբայ, առանց կարենալու ստուգել այս երկու անուններէն մին: Այս յիշատակարանը ժայռի մէջ փորուած խոր քարանձաւի տեսակ մ'է, որուն ճակատը չորս փառաւոր սիւներով զարդարուած է, դորացի ճարտարապետութեամբ շինուած: Սաստիկ հնութեան ցոյց կու տայ, մինչև ժամանակակից կրնայ սեպուիլ Զաքարիայ և Աբիսողոմայ գերեզմանաց:

Անստոյգ աւանդութիւն մը կ'աւանդէ թէ Յակոբոս Առաքեալը տեսնելով որ Յուդա և Հրէից ամբոխը բռնեցին զՅիսուս իր վարդապետը Զիթենեաց լեռան վրայ, վազած և պահուրտած ըլլայ այս այրին մէջ, ուսկից Քրիստոսի յարութենէն ետքը դուրս ելած:

Յովսափատու ձորոյն քարուտ կողին վրայ կեցած է այն տեղը՝ ուր զնախավայն քարկոծեցին:

Այս ահաւոր ձորոյն մէջէն կանցնի կեդրոն հեղեղատը, և կ'երթայ կըթափի Մեռեալ ծով. ունի վրան միակամար կամուրջ մի. բայց տարւոյն մեծագոյն մասը չոր է: Սխալմամբ քանի մը ճանապարհորդք գրած են թէ տարւոյն մէկ քանի եղանակին մէջ իր ջուրը կարմիր գոյն մը կ'առնու. ոչ այսպէս. միայն շարունակ անձրևներէն ետքը հեղեղատը այն աստիճանի չոր է, որ հազիւ կարելի կ'ըլլայ ձեռք լուալ մէջը: Այս չորութիւնն անտարակոյս անկէ յառաջ գայ, որ շատ կողմեր ջրոյն ընթացքը դէպ 'ի ջրհորները կը դարձնեն:

Կը շարունակուի:

ՀԻՆԳ ԾԱԲԱԹ ՕԴԱՊԱՐԿԻ ՄԷՋ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ԱՆԴՂԻԱՑԻՈՑ

ՅԱՓՐԻԿԷ:

(Տես էրես 133:)

ԳԼՈՒԽ ԻԸ.

Մոզֆէյա. — Շէյխը. — Տրեամ, Գյարբըրդէ, Ոսնէյ. — Ֆոկըլ. — Լոկուսի մայրաքաղաքը. — Դոյ. — Քերնաքի վրայ անորոշորին. — Քաղաքապետն և իր պալատականքը. — Յարձակմունք. — Հրկիդի աղաւնիք:

Յաջորդ օրը, մայիսի 11, Վիկտորիան իր յանդուգն ընթացքը շարունակեց. ճանապարհորդք՝ ինչպէս նաւաստի մը իր նաւուն վրայ, այսպէս ալ իրենք Վիկտորիային վրայ վստահութիւն ունէին:

Զարհուրելի փոթորիկներէ, հասարակածի ջերմութիւններէ, վտանգաւոր չուերներէ, և ալ վտանգաւոր իջնալներէ ետեւ, ամեն տեղ և միշտ բարեբաղդ յաջողութիւն ունեցեր էր: Կրնայ զուրցուիլ թէ Ֆէրկըսըն ակնարկելով միայն, կ'առաջնորդէր անոր. ուստի և տղըդորը թէպէտ իր հասնելու կէտը չէր գիտեր, բայց և այնպէս, ալ ճամբորդութեան յաջողելուն երկիւղ մը չունէր: Միայն այն բարբարոսաց և մոլեռանդից երկիրը, խոհեմութիւնը զինքը կը ստիպէր ամենէն խիստ զգուշութիւններն ընելու. ուստի իր ընկերներուն յանձնեց որ ամեն ատեն և ամեն տեսածնուն ուշադրութիւն ընեն:

Հովը զիրենք քիչ մը աւելի դէպ 'ի հիւսիս կը տանէր, և ժամը իննին ատենները, Մոզֆէյա մեծ քաղաքը տեսան, որ երկու լեռանց մէջ գտնուած բարձրաւանդակի մը վրայ շինուած էր. իր զիրքը անառիկ էր. ճահճի մը և անտառի մը մէջ տեղ եղող նեղ ճամբայ մը միայն դէպ 'ի հոն կը հասնէր:

Այս ատենս չէյիս մը, հետը ձիաւոր պահապաններ ունենալով, վառ գոյնե.